ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 230

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 06-008-0088-0015 կադաստրային ծածկագրով 0.064 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր | 06-008-0088-0015 կադաստրային ծածկագրով 0.064 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության կապի հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Տաշիր համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Տաշիր քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | [signature] | Ա. Ղուլարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | [signature] | Հ. Դավթյան |

Երևան, «14» «օգոստոսի» 2023 թ.